# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

2025 թվականի մարտի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու 9 անդամներից 8-ը: Բացակայում էր Գեղամ Մադոյանը: Նիստը վարում էր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյանը:Նիստին մասնակցում էին համայնքի բնակիչներ, վարչական ներկայացուցիչներ և այլ հյուրեր:

*Օրակարգում՝*

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Զեկուցող՝ Ջ.Հարությունյան**

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Զեկուցող՝ Ջ.Հարությունյան**

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐԴԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 08-028-0112-0057 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 9,2178 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ «ԼԻԶԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Զեկուցող՝ Ջ.Հարությունյան**

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Զեկուցող՝ Ջ.Հարությունյան**

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Ջ.Հարությունյան

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 122-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Ջ.Հարությունյան

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Ջ.Հարությունյան

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Ջ.Հարությունյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | Կողմ'8 | Դեմ' | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հարությունյան Ջ. | | | |
| Ղուկասյան Ա. | | | |
| Աբրահամյան Ն. | | | |
| Ախցխեցյան Է. | | | |
| Զաքարյան Հ. | | | |
| Թադևոսյան Է. | | | |
| Գևորգյան Հ. | | | |
| Մարտիրոսյան Հ. | | | |

Լսեցին

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ջեմմա Հարությունյան/

**Որոշեցին.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2025 թվականի յոթերորդ նստաշրջանի մարտի 27-ի հերթական նիստի՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան) ։

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական

նշանակության նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության, 08-028-0112-0057 կադաստրային ծածկագրով 9,2178 հեկտար հողամասը «ԼԻԶԻ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը վարձակալության տրամադրելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան) ։

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 119-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան) ։

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան) ։

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 122-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան) ։

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան) ։

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան) ։

**Արտահայտվեցին՝ Հենրիկ Գևորգյանը, Համբարձում Զաքարյանը, Նաիրա Աբրահամյանը**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

| | *Կողմ՝9* | *Դեմ՝* | *Ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Հարությունյան Ջ. | [signature] | ___ | ___ |
| Ղուկասյան Ա. | [signature] | ___ | ___ |

Աբրահամյան Ն. ______ ______ ______
Ախցխեցյան Է. ______ ______ ______
Զաքարյան Հ. ______ ______ ______
Մարդոյան Գ. ______ ______ ______
Թադևոսյան Է. ______ ______ ______
Գևորգյան Հ. ______ ______ ______
Մարտիրոսյան Հ. ______ ______ ______
Լսեցին՝

## 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**/Զեկուցող՝ Ջեմմա Հարությունյան/**

**Արտահայտվեցին՝ էդուարդ Ախցխեցյանը, Ջեմմա Հարությունյանը, Հենրիկ Գևորգյանը**

**Որոշեցին՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում սկսել 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2025 թվականի բյուջեում հատկացնել 1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար /Հայաստանի Հանրապետության դրամ գումար՝ 2025 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

3. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

4. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

5. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են բոլոր ոլորտները և համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերը:

6. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
2)համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն:
3)իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամ

բ:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Ամասիա համայնքի ավագանու
2025 թվականի մարտի 27-ի N 23-Ա որոշմամբ

## *ԱՂՅՈՒՍԱԿ*
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՁԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ *ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ*

| ***N*** | ***Առաջարկի անվանումը*** | ***ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ*** | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ***Իրականացվելու է համայնքի փարածքում*** | Իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակում | Իրականացման բյուջեն չի գերազանցում ավագանու հատկացրած սահմանաչափը | ***Հանդիսանում է նոր առաջարկություն***[1] | ***Տեխնիկապես հնարավոր է իրականացնել*** |
| ***1*** | | ***Բավարարում է/ չի բավարարում*** | ***Բավարարում է/ չի բավարարում*** | ***Բավարարում է/ չի բավարարում*** | ***Բավարարում է/ չի բավարարում*** | ***Բավարարում է/ չի բավարարում*** |
| ***2*** | | | | | | |
| ***3*** | | | | | | |

(այդ թվում՝ համայնքի տվյալ տարվա բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ առաջարկ-նախագծերի համընկնման բացառման) և ներկայացվող յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ գումարի առավելագույն սահմանաչափը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

*Կողմ՝8* *Դեմ՝* *Ձեռնպահ*

---

[1] Առաջարկը իրականացման փուլում չէ, ընդգրկված չէ համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում, տվյալ տարվա աշխատանքային պլանում և բյուջեում, չի իրականցվելու այլ կազմակերպությունների կողմից:

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Աբրահամյան Ն.
Ախցխեցյան Է.
Զաքարյան Հ.
Թադևոսյան Է.
Գևորգյան Հ.
Մարտիրոսյան Հ.

*Որոշումն ընդունվեց*

3. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐԴԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 08-028-0112-0057 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 9,2178 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ «ԼԻԶԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկուցող՝ Ջեմմա Հարությունյան/***

***Արտահայտվեցին՝ Համբարձում Զաքարյան, Արտավազդ Ղուկասյանը, էդուարդ Ախցխեցյանը***

***Որոշեցին***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության, 08-028-0112-0057 կադաստրային ծածկագրով, 9,2178 հեկտար հողամասը/անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ №26032025-08-0054/ հրաբխային խարամների արդյունահանում իրականացնելու նպատակով, 200000/երկու հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով, մինչև 26 մարտի 2044 թվականը տրամադրել «ԼԻԶԻ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

| | *Կողմ՝8* | *Դեմ՝* | *Ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Հարությունյան Ջ. | | | |
| Ղուկասյան Ա. | | | |
| Աբրահամյան Ն. | | | |
| Ախցխեցյան Է. | | | |
| Զաքարյան Հ. | | | |
| Թադևոսյան Է. | | | |
| Գևորգյան Հ. | | | |
| Մարտիրոսյան Հ. | | | |

***Որոշումն ընդունվեց***

4. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Ջեմմա Հարությունյան/**

**Արտահայտվեցին՝ Նաիրա Աբրահամյանը, Համիկ մարտիրոսյանը, Էդգար Թադևոսյանը**
**Լսեցին՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Նանե մանկապարտեզ», «Ամասիայի համայնքային գրադարան», «Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» «Ամասիայի սոցիալ-կրթական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2025 թվականի քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 119-Ա որոշման 2-րդ կետով հաստատված թիվ 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի: /հավելվածը կցված չէ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ամասիա համայնքի ավագանու մարտի 27 -ի թիվ 25- Ա
որոշման

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ամասիա Համայնքի ավագանու դեկտեմբերի 24-ի թիվ
119- Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ <<ՍՈՑԻԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | | |
|---|---|---|
| 1 | Աշխատակիցների թվաքանակը | 6 |
| 2 | Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ | 4 |

| Հ/հ | Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով՝ նաև ծածկագիրը) | Հաստիքների քանակը | Հաստիքային միավորը | մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Ընդամենը ամսական աշխատավարձ (դրամ) | Ընդամենը տարեկան աշխատավարձ ( դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 180,000.0 | 180000 | 2160000 |
| 2 | Խմբակավար | 0.5 | 1 | 129,670 | 64835 | 778020 |
| 3 | Խմբակավար | 0.5 | 1 | 129,670 | 64835 | 778020 |
| 4 | Խմբակավար | 0.5 | 1 | 129,670 | 64835 | 778020 |
| 5 | Խմբակավար | 0.5 | 1 | 129,670 | 64835 | 778020 |
| 6 | Տնտեսական ծրագրերի համակարգող | 1 | 1 | 129,670 | 129670 | 1556040 |
| **Ընդամենը** | | **4** | **6** | **828350** | **569010** | **6828120** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

| | Կողմ՝8 | Դեմ՝ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հարությունյան Ք. | | | |
| Ղուկասյան Ա. | | | |
| Աբրահամյան Ն. | | | |
| Ախցխեցյան Է. | | | |
| Զաքարյան Հ. | | | |
| Թադևոսյան Է. | | | |
| Գևորգյան Հ. | | | |
| Մարտիրոսյան Հ. | | | |

***Որոշումն ընդունվեց***

5. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Ջեմմա Հարությունյան/

Արտահայտվեցին՝ Հենրիկ Գևորգյանը, Նաիրա Աբրահամյանը, Ջեմմա Հարությունյան

Որոշվեց՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու

2025 թվականի մարտի 27-ի

N 26-Ն որոշման

**ԿԱՐԳ**

**ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ**

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Ամասիա համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

1. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

2. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի համապատասխան համակարգչային ծրագրով:

3. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և (կամ) Ամասիա համայնքի ավագանու որոշմամբ նման լիազորություններով օժտված օպերատորը կամ այլ կազմակերպությունը (կազմակերպությունները):

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

1. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,

2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Ամասիա համայնքի ավագանու որոշման համաձայն:

IV. Աղբահանության վճարի հաշվարկումը

1. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը օրացուցային ամիսն է:

2. Անշարժ գույքի սեփականատիրոջ՝ ցանկացած հիմքով փոփոխության դեպքում նոր սեփականատիրոջն է անցնում աղբահանության վճարի գծով նախկին սեփականատիրոջ չկատարած պարտավորությունը կամ գերավճարի իրավունքը:

3. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալի կամ անհատույց օգտագործողի՝ աղբահանության վճարի գծով պարտավորությունները փոխանցվում են համապատասխանաբար պետությանը կամ համայնքին, եթե այլ բան նախատեսված չէ նոր վարձակալի կամ անհատույց օգտագործողի հետ կնքված գործարքով:

4. Աղբահանության վճար վճարողի պարտավորությունը դադարում է դրամական միջոցների վճարմամբ կամ ֆիզիկական անձ համարվող վճարողի մահվամբ, եթե՝

1) վճարողի անշարժ գույքն անժառանգ ճանաչվելու հիմքով փոխանցվել է համայնքին ի սեփականություն.

2) պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման՝ մահացածի իրավունքը այլ անձի չի փոխանցվել:

## IV Աղբահանության վճարը հաշվարկողի կողմից սխալ հաշվարկվելու դեպքում պակաս վճարված աղբահանության վճարի գումարների վերահաշվարկումն ու վճարումը

1. Աղբահանության վճարը հաշվարկողի կողմից սխալ հաշվարկվելու դեպքում պակաս վճարված աղբահանության վճարի՝ գրավոր տեղեկացնելու օրվա դրությամբ հաշվարկված՝

1) գումարները վճարում է աղբահանության վճար վճարողը՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակահատվածի համար, բայց ոչ ավելի, քան երեք տարվա համար, եթե սխալ հաշվարկի համար պատճառ են դարձել աղբահանության վճար վճարողի ներկայացրած կեղծ տվյալները.

4) սույն մասի 1-ին կետում նշված գումարները ներառվում են և ենթակա են վճարման ընթացիկ ամսվա վճարի հետ: Աղբահանության վճար վճարողի կամ հաշվարկող մարմնի դիմումի առկայությամբ դիմումատուի հետ համայնքի ղեկավարը կարող է 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմել վճարման ժամանակացույց, որով սույն կետում նշված գումարների մարման ժամկետը կարող է սահմանվել ժամանակացույցի կնքման օրվանից առավելագույնը 6 ամիս: Սահմանված ժամանակացույցի՝ աղբահանության վճար վճարողի կողմից առաջին իսկ խախտման դեպքում կիրառվում են «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տույժերը:

## V. Աղբահանության վճարի գերավճարները

1. Աղբահանության վճարի ավել մուծված գումարները (ներառյալ՝ աղբահանության վճարը հաշվարկողի կողմից սխալ հաշվարկվելու դեպքում ավել վճարված գումարները) հաշվարկվում են որպես կանխավճար, կամ այդ վճարը վճարողի դիմումի հիման վրա ենթակա է համայնքի կողմից վերադարձման՝ դիմումը տալուն հաջորդող 30 օրվա ընթացքում:

1. Յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը պետք է վճարվի անկանխիկ՝ հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

2. Աղբահանության վճարի դրույքաչափի կամ դրա տեսակի փոփոխման դեպքում աղբահանության վճար հաշվարկողը հաջորդող ամսվա 10-ը ներառյալ աղբահանության վճար վճարողներին իրազեկում է հաշվարկված վճարի չափի մասին:

VII Աղբահանության վճար վճարողներին հաշվառողները, աղբահանության վճարը հաշվարկողները և աղբահանության վճարի գանձումը

1. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և համայնքի բյուջե փոխանցումն իրականացնում է համայնքի ղեկավարը:

2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու կողմից կարող են վերապահվել օպերատորին կամ այլ կազմակերպությանը (կազմակերպություններին):

3. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարի հաշվարկումը, ինչպես նաև այդ վճարի գանձումը օպերատորի կամ այլ կազմակերպության կողմից իրականացվելու դեպքում օպերատորը կամ տվյալ կազմակերպությունը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

| | *Կողմ՝8* | *Դեմ՝* | *Ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Հարությունյան Ջ. | [signature] | | |
| Ղուկասյան Ա. | [signature] | | |
| Աբրահամյան Ն. | [signature] | | |
| Ախցխեցյան Է. | [signature] | | |
| Զաքարյան Հ. | [signature] | | |
| Թադևոսյան Է. | [signature] | | |
| Գևորգյան Հ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Հ. | [signature] | | |

***Որոշումն ընդունվեց***

**6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 122-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Ջեմմա Հարությունյան/**

**Արտահայտվեցին՝ Արտավազդ Ղուկասյանը, Համիկ Մարտիրոսյանը, Հենրիկ Գևորգյան**
**Որոշվեց՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 122-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Ծախսային մաս, ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝

ա. «Բաժին 1, խումբ 1, դաս 1, հոդված 5122»՝ «2000,0» թիվը փոխարինել «1818,0» թվով,

բ. «Բաժին 8, խումբ 2, դաս 4, հոդված 5122»՝ «0» թիվը փոխարինել «182,0» թվով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

| | Կողմ՝8 | Դեմ՝ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հարությունյան Ջ. | | | |
| Ղուկասյան Ա. | | | |
| Աբրահամյան Ն. | | | |
| Ախցխեցյան Է. | | | |
| Զաքարյան Հ. | | | |
| Թադևոսյան Է. | | | |
| Գևորգյան Հ. | | | |
| Մարտիրոսյան Հ. | | | |

***Որոշումն ընդունվեց***

7. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***/Զեկուցող՝ Ջեմմա Հարությունյան/***

**Արտահայտվեցին՝ Էդգար Թադևոսյանը, Համբարձում Զաքարյանը, Արտավազդ Ղուկասյանը**

**Որոշվեց՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Շաղիկ բնակավայրում գտնվող 08-088-0005-0020 կադաստրային ծածկագրով 0,09870 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

| | Կողմ՝8 | Դեմ՝ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հարությունյան Ջ. | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Ղուկասյան Ա. | ______ | ______ | ______ |
| Աբրահամյան Ն. | ______ | ______ | ______ |
| Ախցխեցյան Է. | ______ | ______ | ______ |
| Զաքարյան Հ. | ______ | ______ | ______ |
| Թադևոսյան Է. | ______ | ______ | ______ |
| Գևորգյան Հ. | ______ | ______ | ______ |
| Մարտիրոսյան Հ. | ______ | ______ | ______ |

***Որոշումն ընդունվեց***

**8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Արտահայտվեցին Արտավազդ Ղուկասյանը, Նաիրա Աբրահամյան, Էդուարդ Ախցխեցյանը**
**Լսեցին՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի ապրիլի 29-ին՝ ժամը 15:00-ին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

| | *Կողմ՝8* | *Դեմ՝* | *Ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Հարությունյան Ջ. | ______ | ______ | ______ |
| Ղուկասյան Ա. | ______ | ______ | ______ |
| Աբրահամյան Ն. | ______ | ______ | ______ |
| Ախցխեցյան Է. | ______ | ______ | ______ |
| Զաքարյան Հ. | ______ | ______ | ______ |
| Թադևոսյան Է. | ______ | ______ | ______ |
| Գևորգյան Հ. | ______ | ______ | ______ |
| Մարտիրոսյան Հ. | ______ | ______ | ______ |

***Որոշումն ընդունվեց***

ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ղեկավար՝ Ջ. Հարությունյան

Նիստը արձանագրեց աշխատակազմի քարտուղար՝ Ս. Էգնատոսյան